

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2004թ. հուլիսի 1-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը և Հ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Մարդկային զարգացման ազգային հետազոտության (ՄՁԱՏ) համար օգտագործվող աղքատության արագ մոնիթորինգի մեթոդաբանություն» թեմայով շնորհանդեսին,
- ✓ 2004թ. հուլիսի 7-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ.Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետի պաշտոնակատար Դ.Մարտիրոսովան և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը մասնակցել են ք.Երևանում կայացած «Մանկական մահացության հիմնախնդիրները» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2004թ. հուլիսի 14-15-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Հ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման զարգացումը Հայաստանում» թեմայով ազգային կոնֆերանսին,
- ✓ 2004թ. հուլիսի 15-16-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն.Բաղդասարյանը մասնակցել է ք.Ծաղկաձորում կայացած «Զինիական նյութերի և թափոնների համահունչ կառավարման, դրա զարգացման և կայունացման ազգային ինտեգրացիոն ծրագիր» թեմայով սեմինարին,
- ✓ 2004թ. հուլիսի 16-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Հ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են Գեղարքունիքի մարզում կայացած «Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2004թ. հուլիսի 20-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՀ պարենային ապահովության ծրագրի համակարգող հանձնաժողովի հերթական նիստին նվիրված ԵՀ 2003թ. պարենային ապահովության ծրագրի կատարողականի հետ կապված ընթացիկ հարցերի քննարկմանը,
- ✓ 2004թ. օգոստոսի 3-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մրցակցության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում և ներպետական համագործակցությունը» թեմայով կոնֆերանսին,
- ✓ 2004թ. օգոստոսի 14-15-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մուտքագրող-օպերատոր Ա. Սահակյանը մասնակցել են ք.Ծաղկաձորում կայացած «Հայաստանում Հանրային սեկտորի բարեփոխումների ծրագիր» «Տեղեկատվության տարածում» ենթածրագիր թեմայով հանդիպմանը,
- ✓ 2004թ. օգոստոսի 16-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ.Դանիելյանը մասնակցել է ք.Երևանում կայացած «Արդյոք Հայկական դրամը գնահատում է իրականությունը» թեմայով կլոր սեղանի շուրջ քննարկումներին,
- ✓ 2004թ. օգոստոսի 18-20-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԳՀՀ-ի իրականացման համար ազգային ծրագրի մշակման գործընթացում ներգրավված պատասխանատու պետական պաշտոնյաների համար վերապատրաստման դասընթացին: